№ 35 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 23

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 23 № 35

ՇԱԽԻՂ

«ՇԱԽԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարւանը 6 դրան; Առանձին համարները 5 շահի:

Բաժանորդագրութեան տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Բաժանորդագրութեան փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱԽԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-էն մինչեւ 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամւայ համար 1 շահի: Բաժանորդների յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

«ՇԱԽԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին հեռագիրները. Ո՞վ է բանի տեղ դնողը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուի Պաստեօր. Նամակ Ռաշէից. Նամակ Խոյից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կերպարանափոխութեան ազդեցութիւնը գիտութիւնների վրայ:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Լոնդոն. 29 Սեպտ. (ն. տ.) Կ. Պոլսում մեծ յուզում կայ անգլիական 17 մարտանաւերի պատճառով, որոնք հասել են Լեմնոս, որ գտնւում է Դարդանելի մուտքի մօտ:

Կ. Պոլիս. 30 սեպտ. Հայկական ցուցմունքներ տեղի ունեցան այսօր պատրիարքարանի դռան առաջ. ոստիկանները ցրեցին ժողովածներին և այդ անելու միջոցին սպանեցին և վիրաւորեցին շատերին. տեղի են ունեցել շատ ձերբակալութիւններ:

Լոնդոն. 2 հոկտ. Նոր լուրեր են հասնում Կ. Պոլսում հայերի արած խռովութիւնների համար և ցոյց են տալիս որ հետեւանքները շատ ծանր են եղել: Աղմուկը առաջ բարձրացաւ այն հայկական խմբերի առիթով, որոնք Բ. Դուռն էին դիմում խնդիրը մատուցանելու համար: Ոստիկանութիւնը արգիլեց նրանց յառաջանալու, բայց ամբոխը ընդհատ ընդհատ ցրւելով, միանգամից, հայերի վրայ գնդակներ տեղացին: Ժանդարմների ժամօրը սպանուեց. սկսուց մի ընդհանուր աղմուկ ամբողջ քաղաքի մէջ. 80 հայեր այդտեղ սպանուեցին և վիրաւորուեցին, ձերբակալուեցին 500 հոգի: Երեկ ուրիշ աղմուկներ տեղի ունեցան. փողոցները այժմ զինւորներով պահպանւած են: Մեծ խռովութիւն է տիրել պալատում:

Լոնդոն. 3 հոկտ. Հայկական աղմուկները և նրա հետեւանք արիւնհեղութիւնները Կ. Պոլսում, հաւանական է որ Բ. Դրան աւելի կը պնդացնի ընդդիմադրելու տեսութիւններից առաջարկւած բէֆորմները ընդունելուն: Լուրկայ որ աղմուկին մասնակցող հայերից շատերի մօտ սայֆանակներ են գտնւել:

Կ. Պոլիս. 3 հոկտ. Աղմուկը և արիւնհեղութիւնը նորոգեց երեքշաբթի գիշեր: Սոֆտաները և մահմեդական ամբոխը հալածում և սպանում էին հայերին ամեն կողմ ընում: Յայտնւում է որ այդպիսով 70 հայեր սպանւել են: Հաւատացւում է որ հայկական յեղափոխական կոմիտեան է կազմել այդ աղմուկը: Ապստամբներից խլւած դաշոյնները բոլորն էլ մի և նոյն գործարանից են:

Քեամիլ փաշան մեծ եպարքոս է նըշանակել Սայիդ փաշայի փոխարէն:

ՈՎ Է ԲԱՆԻ ՏԵՂ ԴՆՈՂԸ...

—Ինչ որ կուզէք գրէք, ով է բանի տեղ դնողը...

Այդպէս են ասում այնպիսի ապարատներ, որոնք ոչ մի արդարացում չունին իրենց վրայ բարգւած ամբաստանութիւնների դէմ: Լրագրի ասածը, փաստերի հիման վրայ արած ամբաստանութիւնը այնպէս է տղդում նրանց վրայ, որպէս թէ ամբողջ անամօթի երեսին: Գոռդանում են, հաշիւ չեն տալիս. անամօթաբար հարստահարում են հասարակական հիմնարկութիւնները, խաղալիք են դարձնում կրթական դործը. մեծամասնութեան օգուտը իրենց անձնական կրքերին են զոհում և երբ այդ խփում

ձեղ եկեղեցական վէճերին ծառայող մի զէնք որին աղաւաղելով կարողանում էր իւրաքանչիւր մի ուղղութիւն՝ իր դիտաւորութիւնները յարմարացնել: Ճշմարտ փիլոսոփայական գիտութիւնից—որի նպատակն էր Տիեզերքը և իր երեւոյթների էութիւնը բացատրել և պիտութիւնների և իրերի միմեանց հետ ունեցած միութիւնը և կապակցութիւնը որոշել—միայն անունն էր մնացել:

Դպանքներից ազատւելով, սկսեցին այս երկու տարբեր և մի և նոյն ժամանակ անբաժան պիտութիւնները ձեռք ձեռքի տւած և յենւած կերպարանափոխութեան անխուսափելի օրէնքի վրայ, իրենց արշաւանքներն անել: Ահագին դա մի նշանաւոր մոմենտ էր մարդկութեան պատմութեան մէջ: Մարդուս պիտի բացատրէին բնութեան երեւոյթները, որ նրան մինչև այն ժամանակ հրաշքներ էին թւում. նա պիտի իմանար որ նրա երկինք կարծած բանը մի գմբէթաձև ապակէ չինւածք չէ, այլ աիեղերային անվերջ տարածութիւն:

Առաջին քայլն արեց երկնագիտութիւնը (astronomie): 1543 թւականին լոյս տեսաւ լեհական երկնագէտ Կոպերնիկոսի նշանաւոր աշխատութիւնն, որ գիտնական փաստերի վրայ հիմնւած՝ հետեւել կարծիքն էր ապացուցանում. երկրագունդը տիեզերքի կենդրոնում չի գտնվում, այլ պտտում է իրրև մի մոլորակ՝ արեգակի շուրջը: Երկնագիտութեանը յաջողւեց տիեզերքի մեքենաբանութեան մէջ

ես իրենց երեսին և երբ չեն կարողանում արդարանալ, ընդհում են աներեսի միջոցը. այն է՝ ծուվում, գալարւում են հարւածների տակ, յետոյ առաձգական մարմնի պէս նորից գլուխ են բարձրացնում և նորանոր դողութիւնների պլանները գծում. իսկ մամուլին պատասխանում են.

—Ինչ որ կուզէք գրէք. ով է բանի տեղ դնողը...

Օրինակներ անպակաս են: «Շաւիղը» այս տարի փաստերի հիման վրայ, նոյն իսկ Թէհրանում, մի քանի հասարակական փողեր կլանողների, մի երկու հատ հասարակական կալւածները շահագրծողի և մի քանի կրթական հիմնարկութիւնները իրենց սնոտի փառամոլութեան զոհողների՝ խարանեց. փաստերը տւաւ, ակներև փաստեր, որոնք ոչ մի առարկութիւն չէին վերցնում և ստիպեցին խարանուղները այդ հարւածների տակ պահ մի կծկւելուց յետոյ, նորից գլուխ բարձրացրին և նորից շարունակում են ագդ. գործերի մէջ իրենց քիթը կոխել, նորից ագդ. գրամների հետ են խաղում, և իրենց գատապարտող մամուլին ասում՝

—Ինչ որ կուզէք գրեցէք, ով է բա-

հայեացք ձգել և նկատել որ մեր երկրագունդը միայն մի փոկրիկ աստղիկ է, մի չամանդաղ, հիւլէ, որ տիեզերքի միջում լողում է: Նա մաթեմատիկական ապացոյցներով այդ տեսութեան ճշմարտութիւնը ցուցնելով տւեց Պտղոմէոսական տիեզերախօսութեանը մահուան հարւած: Այդտիեզերագիտութիւնը ընդունում էր որ իրր թէ երկրագունդը տիեզերքի միջնակէտն է, որի շուրջն են բոլորվում միւս բոլոր աստղերը:

Կոպերնիկոսի արած մեծ գիտից յետոյ մարդկանց անհրաժեշտ էր ձգտել մեր երկրագնտի, արեգակի և միւս մոլորակների ծագումը բացատրելու, որովհետև կերպարանափոխութեան օրէնքին հետեւելով, չէր կարելի ենթադրել, որ նրանք միշտ այժմեան դրութեան մէջ են եղել և այնպէս էլ պիտի մընան:

Այդ խնդիրը լուծեցին գերմանացի փիլոսոփայ Կանտը և ֆրանսացի երկնագէտ Լապլասը անցեալ դարու երկրորդ կիսում: Հեռադէտով աիեղերային եթերի մէջ տատանուող աստղերն ուսումնասիրելով, կարողացան ներքանք մեր արեգակի նման արեգակներ գտնել, որոնցից իւրաքանչիւրը կրկին իր շուրջը պրատող մոլորակներով մի առանձին խումբ էր կազմում: Նրանք տեսնում էին այդ տարածութեան մէջ ուրիշ շատ պղտոր կէտեր, ար մի արեգակնային սիստեմ նորից ծագելու վերայ էր. և ուրիշ կողմում հուրի պէս

ՇԱՐՈՒՆԱԿ

Ն. Ի. ՊՈԼՈՑԿԻ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Ամեն անգամ, երբ ես հիշում եմ հայրենիքի մասին, ինձ թվում է, թե ես ոչ թե հիշում եմ, այլ ինչ-որ մի ուրիշ բան եմ անում, որի համար ես չունեմ ոչ մի անուն, ոչ մի բառ, ոչ մի հասկացողություն, ոչ մի գաղափար, ոչ մի զգացողություն, ոչ մի ընդունակություն, ոչ մի ուժ, ոչ մի ցանկություն, ոչ մի ձգտում, ոչ մի կարիք, ոչ մի հակում

10 նոյեմ. 95.

—

Ցսյսվոր ֆուտպոլիզ, փոխոտ ու անհոգ ժ. ոսկոբո չէ կարի ինչոկոյ, որքան որ պ ֆ 3 անգամ հայ տասնապահներ։ Չը նայնկոյ որ 25 ֆուտպոլիստներ մի խումբ պատրաստված պիտի ոտքով ինձ ոտոգոյ չէին ուզում ինձ նայնպես

ոցից մի այնպիսի ուսուցչի, որ անամօթութիւն է ունենում նորից ուխտել դպրոցը՝ մի ազգ. ժողովից խօսանալուց յետոյ: Իսկ ինչ վերաբերում է Ռաշտի ժողովրդին, մենք չէինք կարող սպասել որ նա այնքան թուլամորթ լինէր, որ չը կարողանար իր ստորագրութեան վրայ պնդել և շարունակէր թոյլ տալ աղաների անպատկառ բռնակալութեան: Պէտք է դէմ դնել նրանց ինչ որ էլ լինէր և ցոյց տալ որ ժողովուրդը հաւաքական կամք ունի և կարող է իր ուզածը անել: Ռաշտեցոց այժմեան թուլամորթ լռութիւնը, ցաւում ենք ասելու, որ ճորտութիւն է, ստրկական ոգի ունենալ է նշանակում: 26 ստորագրութիւնով թուղթը մեզ մօտ է և սպասում ենք որ շատ շուտով եւս ուղեն մեզնից, ուղարկեն աղաներին և նրանց միանգամ ընդ միշտ դուրս շպրտեն ազգ. գործերից, հասկացնելով որ այդ գործերի ասպարէզը սուրբ է և զանազան աւազակ Ծառուրների տեղը չէ:

—

Ջեազազի դպրոցը փակուել է, այնտեղ գոյութիւն ունեցող մի ինչ որ ամուսնական խնդրի մասին: Դպրոցի ուսուցչը Թէհրան է եկել թշուառ վիճակի մէջ, որովհետև մինչև իսկ իր մի տարւայ ռոճիկը չէ տրուած: Այդ խայտառակութիւն է. ինչու Ամեն. վանքի առաջ. խորհուրդը խելքը գլխին չունի և ուշադրութիւն չէ դարձնում այդ բաների վրայ: Հրաւիրում ենք խորհուրդին վճարել ուսուցչի ռոճիկը. վանքը 32 թուման վճարել կարող է: Սմօթ է թողնել մի ուսուցչի այնքան կարօտ վիճակի մէջ՝ որքան որ նա է այժմ: Մեզ ասում են մինչև իսկ որ վանքը տարեկան Ջեազազից մօտ 60 թուման փող է հաւաքում:

—

Ամսիս 24-ին, որպէս լսում ենք, Թաֆֆիի ընկերութիւնը մտադիր է մի երեկոյթ (ոչ Հանդէս) տալ կաթուղիկոսի օծման երկրորդ տարեդարձի առթիւ (!!) Հրաւիրել են փոխանորդ հօր խօսելու երեկոյթի մէջ և մերժում են ստացել: Թէ Հանդէսի առիթը որպիսի անմիտների խելապատակների արդիւնք պիտի լինի—դա ակներև է:

—

Տուչիից պ. Իսահակ Մատթէոսեան 3 օրինակ այս տարւայ «Շաւիղ» իբր նէր թողած լինելով համբագրութեանս տրամադրութեան տակ պարսկահայ ազգ. հաստատութիւնների համար, դրանցից առաջինը յատկացնում ենք Փերլոյ Սանգիբարան գիւղի դպրոցին և ուղարկում ենք Սպահանի Առաջ. խորհրդարանին տեղ հասցնելու համար, իսկ միւս 2 օրինակի համար սպասում ենք, որ պարս կահայ դպրոցներից անկարողները դիմեն և սաանան: Խնդրւում է հասցէն գրել պարզ և մանրամասն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բուխարեստի լրագիրները հաղորդում են որ թրքայ դեսպանը մի նամակ է ստացել, որի մէջ յայտնւած է որ իբր թէ Բուխարեստում մի ընկերութիւն է կազմւած սուլթանին սպանելու համար. ընկերութեան գլխաւորն է իբր թէ մի Հայ Վարդոսեան անունով, թրքահպատակ. ընկերութիւնը Հայե ից է բաղկացած: Նա նպատակ ունի Սասունում և նրա շրջակայքում գործ դրւած բարբարոսութիւնների վրէժն առնել այդպիսով. Վարդոսեանը, դեսպանի խնդրանօք, Բուխարեստի ոստիկանութեան կողմից ձերբակալւած է »: (Նոր Դար)

—»Նոր-Դարի» Կ, Պոլսի մի թղթակից գրում է որ իբր թէ ասում են կառավարութեան հեռագրով Շաքիր փաշան եւս է կանչւած:

—Գերմանիայի սոցիալիստները ուղարկել են Ֆրանսիայի սոցիալիստներին մի թուղթ որի մէջ յայտնում են իրենց զայրոյթը Սեդանի 25 ամեայ տարեգարձը տօնելու առթիւ:

—Չինացիք թարգմանել են «Համլէտը» Շեկսպիրի և կայսերական դերասանական խումբը ներկայացնելու է այդ գրամեան Փեկինում:

—Միւնխենի սոցիալիստներն ևս ցրել են 20,000 թուղթիկ թերթեր, որանցով նրանք բողոքում են Սեդանի պատերազմի տարեգարձը տօնելու դէմ: Այդ թերթի մէջ նրանք գոչում են «Կորչի՛ մլիտարիզմը, կորչի պատերազմը, կեցցէ խաղաղութիւնը»:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԷՅՏԵՐԻ ԳԻՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Փարիզ. 29 սեպտ. Լսւի Պաստէօրի մահն են ծանուցանում: Ֆրանսական կառավարութիւնը վճռել է մի հանգիստաւոր պետական թաղում կատարել:

Լոնդոն. Հոկտ. 1. Չինաստանը ընդունել է անգլիական ուլտիմատումի (վերջնագիրը) բոլոր պայմանները:

„ՇԱԽԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ազտարխ. Խուրշիդ. Չենք կարող տպագրել: «Միլզա Իսկանդարի» հերոսի ով լինելը ամեն մի արդացող իսկոյն հասկանում է, անհոգ եղէք: Այդ մասին «Շաւիղի» № 15-ում կայ շատ մանրամասնօրէն. աւելորդ է կրկնել նորից:

Ենթահակալ ենք ձեր համակրութեան համար: Գրքերը ուղարկւած են վաղուց: Մամբրէի սպանման մասին արտատպել ենք «Մշակից»:

Մեր ռուսահայ բոլոր բաժանորդներին. Ամեն ջանք ի գործ է դրւում որ կանոնաւորապէս ձեզ հասնի և սկսել ենք հարկ եղած բոլոր տեղեր դիմումներ անել. յոյս ունենք որ նոր տարուց սկսած կանոնաւորապէս կը ստանաք այս տեղ:

Սերասխից-Նիշաբուր. Ասլտակին. Զգալով որ լիակատար ուխտեր էք գրել, ամաչել էք ստորագրելու. անանուն նամակները գրելու կեղտոտ ոչինչ չը կայ: Ձեր գրւածքը կը պահենք և երբ ձեր այդ «անմահ» կոչւած «ազգային մշակի» որդու խմբագրութեամբ լոյս տեսնի «Աստղ Արեւելեանը», այն ժամանակ կը յանձնենք նրան որ տպագրի և հաւատացած եղէք որ այդ Հանդէսում տպելիք յօդւածների մէջ ձերը իր սքանչելի գան կանչնայ:

Դավրէժ. Անմեղ Հանքչեան, Այդ ձևով չենք տպագրիլ. լո րջ թղթակցութեան ձև կը տանք և քիչ փոփոխութեան կենթարկենք եթէ համաձայն էք: Թերթեր կուղարկենք կէս տարւան, ըստկած № 26-ից. չորս ամսւայ բաժանորդագրութիւն չէ ընդունւում. յունվարից կարող էք նորից գրել: Վճարը—6 դրան ուղարկեցէք նամակագրոշմով:

Ընպհան. Հ. Մ. Մանուկեան. Երկրորդ անգամն է որ չան թիւնաւորութեան պատմութիւնն էք անում մեզ. հետաքրքիր չէ. գրեցէք ուրիշ բան մասին. 6—700 տնւոր մի հայ գաղութի մէջ նիւթ չի պակասիլ.

Թիֆլիս. Հ. Առաքելեան. Խօստացաք մեզ գրել վերջին դէպքերի առիթով սպասում ենք:

Բագու. Լէօ. Չենք ստանում. սպասում ենք:

Մարալա. Աքսոր. Անհնար է ձեր նամակները ուղղել. խիստ անգրագէտ ձևով է գրւած. չենք կարող տպագրել, եթէ աւելի լաւ չը գրէք:

Դավրէժ. Նշտար. Երէք ամիս առաջ ձեր ոչ մի թղթակցութիւնը չէ ստացւած որ տպւած չը լինի: Ուղարկեցէք էջմիածնի մասին, կը տպւեն ուղարկւածները:

Պատասխանատու հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ՔԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶՈՒՄ „ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ„ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ձեռնտու արժէքներով շնում է ամէն տեսակ **ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԴՐԱՇՔ** (գրծածած) նմուշները ուղարկւում վերջնական արժէքներով: Պատուածները յետ կ'դարձնեն. հասցէ:
Société de cabinet de lecture populaire, Tauris.
1—4

ԳԷՈՐԳ ՂԱՐԱՋԵԱՆ

Բանուրներիսալան վաճառատուն Եւրոպայում և Ռուսաստանում
(արտատպած „Մուրճ" ամսագրից)
Գինն է 30 կ.

Ձեռք արդիւնքը յատկացրած է Տաճկահայ սովալլ գաղթականներին և Ղարսի ու Երևանի նահանգների կարօտեալներին:

Դիմել Թիֆլիզ. Կեռոնական գլխաւոր ճառանոց կամ „Մուրճի" խմբագրութեան

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՌԱՇՏՈՒՄ
Թիֆլիզի Հայոց Հր. ընկերութեան
ԳՐՔԵՐԸ
Յանկացողներին ուղարկվում է գրքերի ցուցակը:
Դրամի փոխարէն կարելի է ուղարկել և փոստի մարկա եր:
Դիմել՝ Alexandre Ossépian, Rescht
4—5

GRAND HOTEL
ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
4—50

ՍԱՄՈՒՆ
Աչխարհագրական քարտէզով
կազմեց
Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
(Արտատպած »Մշակ» լրագրից)
Գինն է 20 կոպ. (25 շահի)
Դիմել՝ «Շաւղի» խմբագրութեան.

„ԳԱՒՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ"
Գ Ք Գ
ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ
Հեղինակութիւն ԼՈՒՄԱՅԻ
Գինն է 60 կոպէկ
Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарянцу.
Թիֆլիսում վաճառվում է նաև կենդրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:
4—10

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Տարեկան երկու գիրք
Բաժանորդագինը 2 րուբլի: Հասցէ Schoucha (Russie) Mr. Ervand Lalayan
Հրատարակիչ—խմբագիր՝ Երւանդ Լալեանց:
3—3

ԶԳՈ
Հարկաւոր է «Շաւիղի» Խմբագրութեան համար մի լաւ գրաշար (աւելի հայերէն լեզւի) և մի լաւ տպագրիչ արագ տիպ մամուլի համար: Պայմանները հաղորդել: Հասցէ՝ «Շաւիղի» խմբագրոն թան վրայ:

ՀՆԱԶԼԻԻ նորաբաց մի դասեան դպրոցի համար, հարկաւոր է
ՈՒՍՈՒՑԻՉ
Հայերէն, Ռուերէն լեզուների և միւս առարկաների համար: Տաբաթական **24** դասով, **300** րուբլի ռոճիկ, տնեակ (դպրոցում) վառելիք և ծառայ; Դիմել՝ Ենզելիի դպրոցի հոգաբարձութեան, ուղարկելով ուսուցչական վկայականի պատճէնը: 3—3